

Մանկիկին խելքը շուտով պառկեցաւ,  
Սիրով թըրթուրին բաժին խոստացաւ.  
Թըրթուրը սողաց՝ խընձորին հասաւ,  
Ու բոլոր ուժովն աշխատիլ սկըսաւ.  
Երեք բոպէէն  
Խնձորը փրթաւ կոթէն,  
Բայց նա ինչ վաստրկեցաւ:  
Խնձորը ընկաւ չընկաւ,  
Տըզան վրայ վազեց առաւ,  
Կուտով կըճեպովը խածաւ կերաւ:

Թըրթուրը խընձորին հետ վար իջաւ՝ բաժին ուղեց,  
Բայց տըզան զինքը մէկէն ոտքին տակը տըրորեց.  
Եւ այսպէս ոչ խընձորը  
Մընաց եւ ոչ թըրթուրը:

ՔՈՒԱՊ.

## ԹՂԱԿՑՈՒԹԻՒՆՔ.

Առ. 8. Յ. Մ. — Ցունուարի հանելուկին ծեր տըւած լուծումը նարտար է, բայց եւ ըստ ծեր խոստովանութեանը՝ զկրնար այն հանելուկին ամէն խօսքերը լուծել: — Եւ որովհետեւ մեր փետրուարի թերթով տուած լուծումը լաւ չէ իսակացած դուք եւ ծեր ընկերութիւնը, ինչպէս որ կըսէք, ահա ըստ ծեր խնդրանաց անոր մեկնութիւնը տամք, հանելուկը տող առ տող դնելով ու մեկնութիւնը տակը:

,, նա նինգ ոտքով է ուժեղ կենդանի,  
,, Որ վեցօրէից մէջ ըրգտանի.

Կիսէն, այսինքն ջորին (գաթըր) բառը ինչպ գրով կծեւանայ. ջորին վեցօրեայ արարչագործութեան ժամանակ ստեղծուած չլինելը յայտնի է:

,, Երբ երկու ոտիցը վերայ կանգնի,  
,, Խոր ձայնեղ ուժեղ նայրը կրինի.

Երբ կիսէշ բառին երկու գրերը միայն առնումք — է ու ն, — կիսէ էն ձայնեղ եւ ուժեղ կենդանին՝ որ ջորւոյն հայրն է:

,, Խոկ երբ իւր երեք ոտքով շրջի,  
,, նա այն բախտաւոր մարդուն նրմանի  
,, Որ զըրկեց զորդին սրա հօրն ետևէն  
,, Եւ հօրմէն առաջ՝ բազ զրտակ նամքէն:

Երբ իւր երեք ոտքովը շրջի ըսելը կնշանակէ, երբ կիսէշ բառին երեք մնացած գրերն առնումք, այսինքն ԿԻՄ, կլինի յատուկ անուն, եւ է հայրն Սաւուղայ՝ Խըրայելացւոց առաջին թագաւորին: Խուրբ գրոց պատմութիւնը գիտցողը կիսակրնայ որ Կիս' օր մը իւր էշերը կորսնցըներով ղըկեց զորդին որ երթայ փնտոէ գտնէ. բայց որդին էշը չգտած՝ թագ գտաւ ճամբէն, վասն զի Սամուէլ մարգարէն օծեց զնա թագաւոր հսայելի:

Ցուսամ որ այս համառօտ մեկնութեամբ Ցունուարի հանելուկը լաւ հասկընաք Թէ՛ դուք, Թէ ծեր ուսումնասէր ընկերութիւնը եւ Թէ Աղաւնոյն ուրիշ ընթերցողքը:

Առ. 8. Պ. Ա. — Թէ եւ զձեզ անձամք ճանչնալու պատիւը չունիմք, բայց չնորհակալ եմք ձեր սիրալիր ու պատուաւոր խօսքերուն:

Արշակայ Ողբերգութիւնը (ուսկից Յ օրինակ կուղէք) կդատնուի օրագրոյս ամէն գործակալաց քով, որոց անուանքը տպուած են Աղաւնոյս կողքին վրայ :